ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան-10, Հանրապետության
Հրապարակ, Կառավարական տուն 3.
Հեռ.(011) 52-19-64.Ֆաքս (011) 52-63-65
Էլ. փոստ: minenergy@minenergy.am
Վեբ կայք: www.minenergy.am

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 2019 թվականի հունվարի 29-ի գրության՝ հայտնում ենք.

ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք:

Անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն, համապատասխանաբար, անձնական տվյալներ մշակողը պարտավոր է հետևել և ապահովել, որ տվյալները մշակվեն օրենքի պահանջների պահպանմամբ, անձնական տվյալները մշակվում են օրինական և որոշակի նպատակներով և առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով:

ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ աշխատողի անձնական տվյալները փոխանցելիս գործատուն պարտավոր է աշխատողի անձնական տվյալները չհայտնել երրորդ անձանց՝ առանց աշխատողի գրավոր համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է աշխատողի կյանքին և առողջությանը սպառնացող վտանգը կանխելու համար, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Նույն օրենսգրքի 199-րդ հոդվածի համաձայն՝ աշխատողի աշխատավարձի և աշխատանքի այլ պայմանների վերաբերյալ տվյալները տրամադրվում կամ հրապարակվում են միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում կամ աշխատողի համաձայնությամբ, իսկ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության որևէ աշխատակից նման համաձայնություն չի տվել, ուստի հրապարակման է ենթակա միայն նախարարության աշխատողների խրախուսման ֆոնդի ընդհանուր չափը և պարգևատրվածների ընդհանուր թվաքանակը:

2016 թվականի տարեվերջին նախարարության 187 աշխատակիցների տրվել է պարգևատրում 57718,0 հազ դրամի չափով, 2017 թվականի տարեվերջին՝ 146 աշխատակիցների՝ 62981,7 հազ դրամի չափով, 2018 թվականի տարեվերջին՝ 119 աշխատակիցների՝ 69902,7 հազ դրամի չափով: Աշխատողների ամսական միջին աշխատավարձը 2016թ. կազմել է 59044,7 հազ. դրամ, 2017թ.՝ 53771,3հազ. դրամ, իսկ 2018թ.՝ 44932,9 հազ. դրամ:

Լրացուցիչ հղում՝ http://www.minenergy.am/article/1668:

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին

Հեռ՝.+374 (0)11 52-88-48, Էլ. փոստ՝ information@minenergy.am